ների, որոնք եկել էին արտայայտելու Նորին Վեհափառութեան իրանց որդիական հաւատարմութեան զգացմունքները։

Հոկտեմբերի 22ի առաւօտեանը երկինքը ամպած էր, երկիւղ կար, որ անձրեւէր, բայց մի փոքրիկ շաղից յետոյ սկսեց անսպասելի զով եղանակն օդը մաքրուեց, Բագուի փողոցները հովացան, արեւը սկսեց երեւիլ, մի խօսքով՝ հրաշալի եղանակ էր։

Ժամը 7ին առաւօտեան Բագուի Հայ հասարակութեան մէջ տիրում էր մի ուրախ և ոգեւորուած իրարանցում, ամեն ոք սպասում էր որ ժամը 9ին Վեհափառ Հիւրին տեսնէ Բագուի մէջ. բազմութիւնը գնալով շատացաւ խռնուելով մեծ հրապարակը մանաւանդ եկեղեցւոյ շուրջը և մինչեւ երկաթուղին տանող ձիգ ճանապարհը և փողոցները։ Զանգակի անոյշ ձայնը իւր ուրախացուցիչ զօղանջիւնով հրաւիրում էր Լուսաւորչի զաւակներին՝ պատրաստուիլ՝ ընդունելու մեծ Գրիգորիոսի փոխանորդին։

Ժամը 12ին արդէն երկաթուղու կայարանում սեղ գցելու տեղ չկար։ Օրը շաբաթ էր, ռուսաց տօն, հրէից կիւրակի, և հայոց յաւերժայիշատակ հիւրընկալութեան օր։ Արտատրոփ սպասում էին ամենքը նշանակեալ րոպէին, երբ յանկարծ լսուեց՝ «գնացքը եկաւ»։ Հանդիսականները վերցրին իրանց գլխարկները. վերջապէս գնացքը եկաւ և կանգ առաւ. ամենքի աչքերը Վեհափառին էին պտրում. վայր իջան Թադէոս Արքեպիսկոպոսն, Տփխիսի և Արցախի Առաջնորդ Արիստակէս և Կարապետ եպիսկոպոսներն, և վարդապետները, բարձրապատիւ Պօղոս Հաղարծնոյ վանքի վանահայրն և Սահակ վարդապետ, յետոյ երեւեցան զոյգ կարմրազգեստ շաթիրները. հուսկ ապա երեւեցաւ Վեհափառ Հայրապետը։ Մի բոպէում օդը թնդաց ուրախական աղաղակներով՝ «Կեցցէ Վեհափառ Հայրապետը, կեցցէ Մակար առաջին»։

Շամախւոյ և Բագուի Առաջնորդ Մեսրոպը Արքեպիսկոպոսը՝ որ Կայսեր ընդունելու համար եկած էր, փութաց ընդառաջեց, բարձրացաւ երկաթուղու կառքի մէջ և մի քանի համառօտ առարկային յարմար խօսքերով շնորհաւորեց Նորին Օծութեան շնորհաբեր գալուստը, և աջը համբուրելով հրաւիրեց իջնել կառքից։

Ուրախական աղաղակները երկար կտեւէին, եթէ Վեհափառը